

**ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՈՒ ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ՄԻՋԵՎ.  
ՎԱՂ ԱՐԴԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ  
ԶԵՌՆԱՐԿՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ**

**Բանալի բառեր՝** վաճառական, Կոստանդ Ջուղայեցի, Աշխարհաժողով, Ղուկաս Վանանդեցի, վաճառականական դասագիրք, շրջանառություն:

Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդ Ստեփանոս Ջուղայեցին 1690 թվականի ապրիլի 24-ին հանդիմանական նամակ է ուղարկում եվրոպայում բնակություն հաստատած հայ վաճառականներից մեկին՝ Աղա դի Մաթոսին: Ֆլորենցիայի պետական գրիվանում պահպանված այս նամակում<sup>1</sup> Ստեփանոս Ջուղայեցին չի թաքցնում վրդովմունքն իր ազգակից վաճառականներից, որոնք անտեսել էին եվրոպայից Նոր Ջուղա տպագրական պարագաներ ուղարկելու իր նախորդ նամակ-խնդրանքները: Այս անգամ իր նամակը հասցեագրելով Աղա դի Մաթոսին՝ ջուղայեցի հոգևորականը նրանից ակնկալում էր ստանալ 300 մաուչիլ արժողությամբ թուղթ («մինչեւ երեք հարիւր մաուչիլ թուղթ առնուս»), ինչպես նաև՝ եվրոպական տպագրական սարքավորումներ

---

<sup>1</sup> Նամակի բնօրինակը տե՛ս Archivio di Stato di Firenze, Acquisti e Doni, busta 123, Documenti Armeni Inserto 1, 1-38: Այս վավերագիրը, ի շարս իտալական դիվաններում պահպանված բազմաթիվ այլ փաստաթղթերի ընդօրինակությունների, տե՛ս նաև Վնտկ. ձեռ. 1458, ք. 135բ-136բ (ձեռագիրը կազմել է Ժ. Դ. իտալական արխիվներն ուսումնասիրած Մխիթարյան միաբան Գրիգոր Ճեղալյանը, ինչպես տեղեկացնում է Բարսեղ Սարգիսյանն իր կազմած ձեռագրացուցակում՝ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Բ. երկրորդ, Վենետիկ, 1924, էջ 1233): Աղա դի Մաթոսին ուղղված՝ Ստեփանոս Ջուղայեցու այս նամակի բնագրի հրատարակության և անգլերեն թարգմանության համար տե՛ս Սեպուն Ասլանյանի հանգամանալից ուսումնասիրությունը՝ “The Early Arrival of Print in Safavid Iran: New Light on the First Armenian Printing Press in New Julfa, Isfahan (1636–1650, 1686-1693)”, *Handes Amsoreay*, 2014, no. 1-12, pp. 460-468:

(«Դ. դաստ գիր, Բ. երկաթէ չամպար, մէկ գրի շարչու» են)<sup>2</sup>: Վաղ արդի<sup>3</sup> հայ նամակագրական հսկայական ժառանգության այս միավորը հիանալի արտահայտությունն է այն դժվարությունների, որոնց առաջ կանգնում էին տպագրական գործի կազմակերպիչները Նոր Զուղայում Ժէ. դարի վերջին: Սրան համապատասխան էլ՝ ջուղայեցի հեղինակներն, ըստ էության, զրկված էին իրենց գրական ստեղծագործություններն առանձին գրքերի տեսքով լույս ընծայելու հնարավորությունից: Ասվածը վերաբերում է նաև սույն ուսումնասիրության հիմքում ընկած երկերից երկուսին՝ Կոստանդ Զուղայեցու վաճառականական դասագրքերին՝ «Աշխարհաժողով» և «Դռներն ռաղամին» վերնագրերով, որոնք շարագրման ժամանակից՝ 1687 թվականից ի վեր այդպես էլ ընթերցողներին հասանելի մնացին միայն ձեռագիր վիճակում:

Նույն ժամանակահատվածում բոլորովին այլ էր իրավիճակը եվրոպական ծովափնյա քաղաքներում, որտեղ «նավահանգստային հայերը»<sup>4</sup>, ինչպես Սեպուհ Ասլանյանն է բնորոշել, նյութական միջոցներ էին ներդնում հայկական տպարանների հիմնադրման գործում և հովանավորում հայերեն գրքերի հրատարակության աշխատանքները: Հենց «նավահանգստային հայերից» մեկի՝ Պետրոս Զուղայեցու հովանավորությամբ 1699 թվականին Ամստերդամում գործող Վանանդեցիների տպարանում լույս տեսավ վաճառականական մեկ այլ դասագիրք: Հեղինակ Դուկաս Վանանդեցին իր աշխատության համար ընտրել էր «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ եւ դրամից բոլոր աշխարհի» վերնագիրը՝ այն հասցեագրելով հայ վաճառականությանը՝ «առ հայազուն վաճառասէր եղբարս»: Իր ծավալին հակառակ՝ ընդամենը 80 էջանոց այս

<sup>2</sup> S. Aslanian, "The Early Arrival of Print in Safavid Iran", pp. 462-463, Մ. Կարապետյան, Է. Թաշիրյան, «Էջեր XVII դարի վերջի Նոր Զուղայի պատմությունից», ԲեՀ, 1998, ք. 2, էջ 81, Է. Թաշիրյան, Նոր Զուղայի հայ գաղթաբաններ 17-18-րդ դդ. եվրոպական աղբյուրներում, մաս I, Երևան, 2012, էջ 68-69:

<sup>3</sup> Վաղ արդի հայոց պատմության՝ առանձին պատմափոփ յուրահատկությունների դիպուկ վերհանման համար տե՛ս S. Aslanian, "Port Cities and Printers: Reflections on Early Modern Global Armenian Print Culture," *Book History*, no. 17, 2014, pp. 53-58: Համաշխարհային պատմագիտության մեջ ընդունված «վաղ արդի դարաշրջան» եզրը հայագիտական հետազոտություններում շրջանառվելու անհրաժեշտության, ինչպես և հարցի շուրջ առկա տեսակետների ամփոփ ներկայացման համար տե՛ս իմ աշխատության «Վաղ արդի դարաշրջանն ու հայոց պատմությունը» ներածական մասը՝ Ս. Բաղդարյան, Նոր Զուղայից երևան ու էրզրում. ճիզվիտ քարոզիչները հայկական բնակավայրերում XVII-XVIII դդ., Երևան, 2018, էջ 9-23:

<sup>4</sup> S. Aslanian, "Port Cities and Printers: Reflections on Early Modern Global Armenian Print Culture", p. 56.

փոքրիկ գրքույկն արժանացել է ոչ միայն իր ժամանակակիցների ուշադրությանը, այլև վաղ արդի պատմության մասնագետների բարձր գնահատականին: Բավական է հիշատակել այն փաստը, որ վաճառականական այս ձեռնարկին մի ծավալուն պարբերություն է նվիրել համաշխարհային համբավ ունեցող Ֆեռնան Բրոդելը «Քաղաքակրթությունն ու կապիտալիզմը 15-18-րդ դարերում» վերնագրով իր եռահատոր գրքի երկրորդ հատորում<sup>5</sup>:

Նոր Զուգայում ու Ամստերդամում ընդամենը 12 տարվա տարբերությամբ ի հայտ եկած հայկական վաճառականական այս ձեռնարկները բնորոշվում են աչքի զարնող բովանդակային համանմանությամբ: Երկերի առնչակցության վերաբերյալ հետազոտողների գնահատականները հիմնված են հենց այդ համանմանության վրա: Այսպես՝ Հովհաննես Տեր-Գավթյան Զուգայեցու հաշվեմատյանի վերաբերյալ իր նշանավոր հոդվածներում դեռևս 1966-1967 թվականներին Լևոն Խաչիկյանը հպանցիկ կարծիք է հայտնել «Աշխարհաժողով»-ից Ղուկաս Վանանդեցու լայնորեն օգտված լինելու վերաբերյալ<sup>6</sup>: 1975 թվականին Գեղամ Գևորգյանը, առանձին հոդված նվիրելով Ղուկաս Վանանդեցու երկին, կրկնել է նույն տեսակետը<sup>7</sup>: Առևտրական երկու երկերի առնչակցության վերաբերյալ այդ տեսակետն ավելի ուշ հաստատել է նաև Էլիզաբեթ Թաշիրյանը<sup>8</sup>: Ի վերջո, 2011 թվականին տպագրված իր ուղենշային գրքում Սեպուհ Ասլանյանը Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ»-ն բնորոշել է որպես Կոստանդ Զուգայեցու «Աշխարհաժողով»-ի «խտացված տարբերակ»՝ ամստերդամյան հրատարակությունը բացատրելով ձեռագիր օրինակների սակավությամբ և այն դժվարություններով, որոնց կարող էին բախվել հայ

<sup>5</sup> **F. Braudel**, *Civilization and Capitalism, 15th-18th Century*, vol. 2: *The Wheels of Commerce*, New York: Harper and Row, 1983, p. 158.

<sup>6</sup> **L. Khachikian**, "The Ledger of the Merchant Hovhannes Joughayetsi", *Journal of the Asiatic Society* 8, no. 3, 1966, p. 178, idem, "Le registre d'un marchand arménien en Perse, en Inde et au Tibet (1682-1693)", *Annales: Économies, sociétés, civilisations*, 22e année, no. 2 (mars-avril), 1967, p. 266.

<sup>7</sup> **K. Kévonian**, "Marchands arméniens au XVIIe siècle: A propos d'un livre arménien publié à Amsterdam en 1699", *Cahiers du Monde Russe et Soviétique*, 1975, no. 16, pp. 200-201.

<sup>8</sup> **Է. Թաշիրյան**, «Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշոյ, բոտյ եւ դրամից բոլոր աշխարհի» աշխատության հայկական աղբյուրների հարցի շուրջ», ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների 19-րդ նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, 1985, էջ 7:

վաճառականները ձեռագիր «Աշխարհաժողով»-ը հայթայթելիս<sup>9</sup>։ Ընդհանուր առմամբ, այս բոլոր գնահատականների հիմքում ընկած է մի ընդհանուր մոտեցում՝ Ղուկաս Վանանդեցու երկը հիմնված է «Աշխարհաժողով»-ի վրա, այլ կերպ ասած՝ դրա փոխադրված ու համառոտ տարբերակն է։ Այս հարցի կապակցությամբ դիտելի է նաև աննկատ մնացած այն հանգամանքը, որ հեղինակն ինքը, թեև շտալով Կոստանդ Ջուղայեցու անունը, խոստովանել է հայկական աղբյուրներից օգտված լինելու հանգամանքը և առաջաբանում արձանագրել. «Ըստ կարի մերում, և ըստ որում՝ ի հարազատ գրեանս եղեալ գտինք, զյետ նոցա երթալով զնոյն մեք եւս ի յօգուտ մերազնեայ վաճառասէր եղբարցդ արձանացուցուք»<sup>10</sup>։

Վերջին երեք տարվա ընթացքում հայկական առևտրական սկզբնաղբյուրների, մասնավորապես՝ վաճառականական ձեռնարկների ուսումնասիրությունն ակնհայտ դարձրեց այս հարցի կապակցությամբ հանգամանալից քննության վրա հիմնված գնահատականների անհրաժեշտությունը։ Երկերի բնագրերի խորքային ծանոթության ու բնագրային զուգադիր համեմատությունների միջոցով հնարավոր կլինի փաստարկված տեսակետ հնչեցնել, հատկապես որ նախորդ գնահատականները, հպանցիկ բնույթ կրելով, հասկանալիորեն այդպիսի նպատակ չեն հետապնդել։ Բնագրերի համեմատությունը թույլ կտա ոչ միայն լույս սփռել փ. դարավերջին շարադրված առևտրական այս աշխատությունների առնչությունների հարցի վրա, այլև ի հայտ բերել բովանդակային տարբերությունների այն շարքը, որը ուղղորդված չէր դուրս մնացած հետևությունների ուղի կարող է հարթել։ Բավական է ասել, որ, օրինակ, Կոստանդ Ջուղայեցու առևտրական երկերն ընկալվել են մեկ ամբողջություն, մինչդեռ Ջուղայեցի այս դարապետը հեղինակել է միանգամայն տարբեր երկու դասագիրք։

Այս կապակցությամբ տեղին է նշել նաև, որ հայկական առևտրական

<sup>9</sup> S. Aslanian, *From the Indian Ocean to the Mediterranean: The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa*, Berkeley: University of California Press, 2011, p. 137. Այս հարցին ուսումնասիրողն անդրադարձել է նաև իր ավելի վաղ հրատարակված կարևոր հոդվածում՝ S. Aslanian, “The Circulation of Men and Credit: The Role of the Commenda and the Family Firm in Julfan Society”, *The Journal of the Social and Economic History of the Orient*, 2007, 50:2, pp. 137-138:

<sup>10</sup> Ղուկաս Վանանդեցի, Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի, Ամստերդամ, 1699, էջ 3 (ընդգծումը մերն է – Ս. Բ.):

ձեռնարկների վերաբերյալ առկա պատկերացումները խիստ աղոտ են և ակնհայտորեն կարող են բնորոշվել որպես հայ վաճառականության պատմության բաց ոլորտ: Պատկերն ամենևին չի փոխվել Միշել Ադասյանի ու Գեղամ Գևորգյանի՝ դեռևս 1988 թվականին արված գիտարկումից հետո. «Ձեռագրերում ցրված են մի շարք առևտրական ուղեցույցներ, որոնք պետք է ցուցակագրել ու ուսումնասիրել մի օր»<sup>11</sup>: Այս ուղղությամբ կատարվելիք աշխատանքների առանցքում պետք է հայտնվեն ոչ միայն առավել ուշագրավ առևտրական ձեռնարկների գիտական բնագրերի կազմումն ու հրատարակումը, այլև դրանց ուսումնասիրությունը վաղ արդի շրջանի եվրոպական վաճառականական դասագրքերի լայն համապատկերում:

Այս աշխատանքն սկսվում է խնդրո առարկա առևտրական ձեռնարկների մասին ոչ ընդարձակ, սակայն հանգամանալից անդրադարձով ուշադրության կենտրոնում պահելով դրանց շարադրման հանգամանքներն ու բովանդակությանն առնչվող հարցերը: Երկրորդ մասում փորձելու եմ վերանայել գերիշխող այն տեսակետը, թե Ղուկաս Վանանդեցու ձեռնարկը Կոստանդ Զուգայեցու «Աշխարհաժողով»-ի սոսկ համառոտ տարբերակն է: Բնագրային բազմաթիվ համապատասխանությունների հետ մեկտեղ՝ ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում նաև զգալի այն աշխատանքը, որ կատարել է վանանդեցի հեղինակը՝ բազմաթիվ հատվածներում ներկայացնելով այնպիսի տեղեկություններ, որոնք բացակայում են Կոստանդ Զուգայեցու «Աշխարհաժողով»-ում: Բնագրերի համեմատությունը թույլ է տալիս մի կողմից հավասարակշռված գնահատական տալ «Գանձ չափոյ» առևտրական ձեռնարկին, իսկ մյուս կողմից՝ բացահայտել նրա հեղինակի կատարած ստեղծագործական աշխատանքի առանձնահատկությունները: Հետազոտությունն ունի նաև հեռահար նպատակ. «Աշխարհաժողով»-ի ու «Գանձ չափոյ»-ի աղբյուրագիտական առնչակցության մատնանշումը մղում է մտածելու հարցերի այնպիսի խմբի մասին, որի առանցքում Կոստանդ Զուգայեցու երկի ազդեցությունն է վաղ արդի հայ վաճառականական գրականության վրա առհասարակ և, որ առավել հետաքրքրական է, նրա շրջանառությունը Նոր Զուգայի համաշխարհային առևտրական ցանցում:

<sup>11</sup> M. Aghassian, K. Kévonian, "Le commerce arménien dans l'Océan Indien aux 17<sup>e</sup> et 18<sup>e</sup> siècles", *Denys Lombard et Jean Aubin (éds.), Marchands et hommes d'affaires asiatiques dans l'Océan Indien et la Mer de Chine 13<sup>e</sup>-20<sup>e</sup> siècles*, Paris: Éditions de l'École des Hautes Études en Sciences Sociales, 1988, p. 163.

**Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով» և «Դռներն ռաղամին»  
առևտրական ձեռնարկները**

Որպես բացառիկ ու ինքնատիպ երկ՝ Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովը» մշտապես հիշատակվել է հայ վաճառականության պատմությանը նվիրված հետազոտություններում: Առաջ եկած որոշակի հետաքրքրությունը, սակայն, բավարարվել է աշխատության մասին միայն նկարագրական տեղեկատվության առկայությամբ: Դա, մասնավորապես, հանգում է հետևյալին. Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցում<sup>12</sup> առևտրական դասընթացներ վարած Կոստանդ Ջուղայեցին 1680-ական թթ. շարադրել է վաճառականական դասագիրք, որը հայտնի է «Աշխարհաժողով» անունով: Բազմիցս ընդգծվել է, որ հեղինակը հարուստ տվյալներ է ներկայացրել տարբեր երկրների չափի ու կշռի համակարգերի, դրամական միավորների մասին՝ կարևոր տեղեկություններ հայտնելով նաև զանազան ապրանքների շուկաների վերաբերյալ<sup>13</sup>: Հպանցիկ ծանոթության շրջանակները չգերազանցող այս նկարագրությունը թույլ չի տվել գոնե քիչ թե շատ ամբողջական պատկերացում կազմելու առևտրական այս ձեռնարկի բովանդակության մասին, իսկ բնագրի անտիպ լինելու հանգամանքը զգալիորեն խոչընդոտել է նրա պարունակած հարուստ տեղեկությունների օգտագործմանը<sup>14</sup>: Ինչ վերաբերում է Կոստանդ Ջուղայեցու

<sup>12</sup> Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցի մասին տե՛ս **Բաղդարյան Ս.**, «Կրթություն և հաջողություն. Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցը (XVII դ.-XVIII դ. սկիզբ)», *Մատենադարանի 3-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի հոգվածների ժողովածու*, Երևան, 2018, էջ 51-64:

<sup>13</sup> Կոստանդ Ջուղայեցու ու նրա «Աշխարհաժողով»-ի հպանցիկ նկարագրություններից տե՛ս, օրինակ, **Յ. Տեր-Յովհաննես**, *Պատմություն Նոր Զուղայու որ յԱսպահան*, հ. Ա, Նոր Զուղա, 1880, էջ 159-160, հ. Բ, Նոր Զուղա, 1881, էջ 253-254, **Վ. Բայբուրդեան**, *Համաշխարհային առևտուրը եւ իրանահայությունը 17-րդ դարում*, Թեհրան, 1996, էջ 55-56, **S. Aslanian**, *From the Indian Ocean to the Mediterranean*, pp. 136-137, **S. Hovhannisyan**, “Examination of Armenian Trade Capital (16th-18th centuries) in Light of Fernand Braudel’s Civilization Theory”, *Armenian Review*, Vol. 54, Number 3-4 (Spring-Summer), 2014, pp. 52-53 ևն: Ակնհայտորեն օգտվելով Լ. Խաչիկյանի նշանավոր հոդվածում բերված տեղեկությունից՝ Կոստանդ Ջուղայեցու երկը հպանցիկ հիշատակել է նաև դանիացի նշանավոր պատմաբան Նիլս Սթենսգարդն իր դասական հետազոտության մեջ **N. Steensgaard**, *The Asian Trade Revolution of the Seventeenth Century: The East India Companies and the Decline of the Caravan Trade*, Chicago and London: University of Chicago Press, 1974, p. 23, n. 4:

<sup>14</sup> «Աշխարհաժողով» առևտրական ձեռնարկի միակ հրատարակված փոփոխված հատվածը տե՛ս **Վ. Փափազյան**, «Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովի» Հայեպ-Թավրիզ մայրուղուն վերաբերող հատվածը», *ԼՀԳ*, 1985, թ. 6, էջ 80-85, նույնի, *Հայաստանի*

երկրորդ՝ «Դռներն ռաղամին» երկին, ապա այն ևս պատշաճ ուշադրության չի արժանացել: Ասվածը հավաստելու համար բավական է նկատել, որ այն անգամ չի տարանջատվել «Աշխարհաժողով»-ից՝ դիտարկվելով որպես առևտրական միևնույն դասագրքի մաս:

Հայերեն ձեռագրացուցակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կոստանդ Զուղայեցու առևտրական երկերը մեզ են հասել վեց ամբողջական ձեռագրով, որոնցից երեքը պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (ՀՃԻ 5994, 8443, 10704), երկուսը՝ Օքսֆորդի Բոդլեյան գրադարանի հայերեն ձեռագրական հավաքածուում (ՀՃԻ 14, 15), և մեկն էլ՝ Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի գրավանդում (ՀՃԻ 64): Ընդ որում, եթե տարբեր հետազոտողներ զանազան առիթներով հիշատակել են շուղայեցի հեղինակի երկերն ամփոփող այս կամ այն ձեռագիրը, ապա Բոդլեյան գրադարանի վերոհիշյալ ՀՃԻ 15 ձեռագիրը մնացել է ուշադրությունից դուրս՝ առ այսօր հայտնի լինելով միայն Ֆրեդերիկ Կոնիբերի ու Սուքիաս վ. Պարոնյանի համառոտ նկարագրությամբ<sup>15</sup>: Նպատակ չունենալով կենտրոնանալու Կոստանդ Զուղայեցու առևտրական ձեռնարկների ձեռագրերի վրա՝ արձանագրենք միայն երկու հետաքրքրական հանգամանք: Առաջին՝ դրանց մի մասի դատարկ մնացած էջերին կարելի է հանդիպել ձեռագրերն օգտագործող վաճառականների հետագայում թողած հիշատակարանները<sup>16</sup>, որոնք փաստական անփոխարինելի վկայություն են տալիս վաճառականների ուղևորությունների ժամանակ Կոստանդ Զուղայեցու ձեռնարկների՝ որպես ուղեցույցների գործածության մասին: Երբեք է հրատարակված այս հիշատակարանների մասին պատկերացում կազմելու համար մեջբերենք դրանցից մեկը. «Աստուծով թիվն ՌՃԾ. (1701) դամար ԺԳ. (13) Յովանն օրն ուրբաթ գնացին դապի և Աւետնն Ֆռանգըստան: Աստուած ուրէնց

առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում XVI-XVII դարերում, Երևան, 1990, 160-163: Այս առիթով տեղին է նշել, որ ավարտական փուլում են Կոստանդ Զուղայեցու առևտրական ձեռնարկների գիտական բնագրերի պատրաստման աշխատանքներս, որոնց զուգահեռ ընթանում է նաև բնագրերի ծավալին գերազանցող հանգամանակից ծանոթագրությունների կազմման ու առևտրական զանազան հասկացությունների բացատրության առավել դժվարին ու տևական ջանքեր պահանջող գործը:

<sup>15</sup> *Catalogue of the Armenian Manuscripts in the Bodleian Library*, compiled by **Rev. Sukias Baronian and Frederic Conybeare**, Oxford, 1918, p. 245.

<sup>16</sup> Կոստանդ Զուղայեցու ձեռնարկներն ամփոփող ձեռագրերի հիշատակարանների վրա ուշադրություն է հրավիրել միայն Սեպուհ Ասլանյանը՝ *From the Indian Ocean to the Mediterranean*, p. 137:

բան, աչն աջողի: Աստուած յերկար ումբր տայ և ամենեցուն: Ամէն»<sup>17</sup>: Հովհաննի ու Ավետի՛ Եվրոպա գործնական ուղևորութիւնն արձանագրող այս ու մեկ տասնյակը գերազանցող համանման այլ հիշատակարաններից պետք է եզրակացնել, որ Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկները ոչ միայն դասագրքերի գործառնութիւն են ունեցել նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցում, այլև առևտրական ճանապարհորդութիւնների ժամանակ ուղեցույցի դեր են կատարել: Անցնելով ձեռագրերի վերաբերյալ երկրորդ ուշագրավ դիտարկմանը՝ առանձին ուշադրութեան առարկա պետք է դարձնել ձեռագրերի այն հատվածները, որոնցում առկա են բնագրային շեղումներ, այսինքն՝ ընդօրինակված են ոչ թե Կոստանդ Ջուղայեցու գրչին պատկանող, այլ նրա ձեռնարկների հետ որևէ առնչութիւն չունեցող նյութեր: Ասվածի լավագույն օրինակը ՄՄ 5994 ձեռագիրն է, որում «Աշխարհաժողով»-ի՝ Հնդկաստանի մասին պատմող հատվածն ընդմիջվում է մի բնագրով՝ «Յաղագս առևտրի մարգարտի Հնաստան, որ վաճառականք չէվայ խսէպ ասեն» խորագրով<sup>18</sup>: Մյուս ձեռագրերում չհանդիպող այս բնագրի հեղինակն այդպես էլ անհայտ կմնար, եթե այս բացառիկ նյութին հաջորդող հիշատակարանը պարզութիւն չմտցնէր. «Սորա տեսանօղն և գրօղն խօճայ Մինասեան պարոն Սաֆրազի որդի Աղամալ աղան է ելել, Աստուած լուսաւորէ իւր հոգին»<sup>19</sup>: Մինասյան նշանավոր ընտանիքի ներկայացուցիչ Աղամալի չափազանց հետաքրքրական այս բնագիրը, որն իրավամբ առանձին երկի տպավորութիւն է թողնում, բաժանված է 21 գլուխների, որոնցից յուրաքանչյուրում պատմվում է թանկարժեք քարերից մեկի մասին՝ մարգարիտ, ալմազ, կարմիր յաղուժ և այլն: Նույն ձեռագրում «Աշխարհաժողով»-ի ընդօրինակութիւնն ավարտելուց հետո գրիչը, թողնելով «Աստուծով ներքոյ գրեալս Մատրասին մարգարտին չէվայ հիսապն է» ցուցումը, զետեղել է մարգարտի առքուվաճառքին վերաբերող մի բնագիր՝ կից բազմաթիվ աղյուսակներով<sup>20</sup>: Մինասյան վաճառականական ընտանիքի

<sup>17</sup> Նոր Ջուղա ձեռ. Հ<sup>մ</sup> 64, 6ա: Ձեռագրի թվային պատկերները տրամադրելու համար խորին շնորհակալություն եմ հայտնում Սեպուհ Ասլանյանին (Կալիֆոռնիայի համալսարան, Լոս Անջելես):

<sup>18</sup> ՄՄ 5994, 4ա-12բ:

<sup>19</sup> Նույն տեղում, 12բ:

<sup>20</sup> Նույն տեղում, 27բ-44բ:

պատմություն<sup>21</sup> տեսանկյունից բացառիկ այս նյութերը, որոնք մինչև այսօր որևիցէ ուշադրություն չեն արժանացել<sup>22</sup>, միաժամանակ ուշագրավ են դարձնում Կոստանդ Ջուլայեցու ձեռնարկներն ամփոփող ձեռագրերից մեկը:

Դասագիրքը վաճառականների համար առավել ընկալելի և գրավիչ դարձնելու հեղինակի ցանկությունն իր կնիքն է թողել «Աշխարհաժողով»-ի կառուցվածքի վրա: Երկը շարադրված է երկու վաճառականների միջև ընթացող երկխոսության ձևաչափով, և իր կուտակած առևտրական հարուստ տեղեկատվությունը Կոստանդ Ջուլայեցին ներկայացնում է որպես զրուցակիցներ՝ միմյանց հղված հարցերի պատասխաններ: Օրինակ՝ զրուցակից վաճառականներից մեկի խնդրանքը՝ «կու խնդրեմ, որ քաղաքէ քաղաք, երկրէ յերկիր, ապրանաց ապրանքի որպիսութիւնն՝ չափէրն, քաշէրն, փողէրն, ըստակնէրն և ամենայն ինչ ևս ասացես»<sup>23</sup>, Կոստանդ Ջուլայեցուն հնարավորություն է տալիս անցնելու վաղ արդի աշխարհի առևտրական շուկաների իր բացառիկ նկարագրությանը՝ այն ձևակերպելով որպես հնչեցված հարց-խնդրանքի պատասխան: Չափագիտական ու դրամագիտական տեղեկությունների կողքին հեղինակն անհրաժեշտ չափով կենտրոնանում է նաև առևտրական մաքսավճարների ու տվյալ տարածքի հիմնական ապրանքատեսակների վրա: Ներկայացված տվյալների համեմատությունն այլ աղբյուրների հետ ի հայտ չի բերում զգալի տարբերություններ, իսկ առաջ եկած որոշ անհամապատասխանություններն էլ պայմանավորված էին ինչպես չափի, կշռի, դրամի միավորների անընդհատ փոփոխություններ կրելու, այնպես էլ հարկային պաշտոնյաների կողմից սահմանված սակագները խախտելու երևույթի հետ<sup>24</sup>:

<sup>21</sup> Մինասյան վաճառականական ընտանիքի մասին տե՛ս Շ. Խաչիկյան, Նոր Զուլայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դարերում, Երևան, 1988, էջ 81-100, S. Aslanian, *From the Indian Ocean to the Mediterranean*, pp. 159-164:

<sup>22</sup> Հավելեմք, որ ՄՄ 5994 ձեռագրի այս երկու բնագրերը, որոնք որևիցէ աղբյուր չունեն Կոստանդ Ջուլայեցու առևտրական ձեռնարկների հետ, հանգամանալից ծանոթագրություններով հրատարակության է պատրաստել Կալիֆոռնիայի համալսարանի (Լոս Անջելես) ուսանող Սոնա Թաշիրյանը *“Involvement of the Armenian Mercantile Community of New Julfa in the Early Modern Global Trade of Diamonds and Gemstones”* խորագրով իր ատենախոսության շրջանակներում:

<sup>23</sup> Նոր Զուլա ձեռ. Հ<sup>մ</sup> 64, 9բ-10ա:

<sup>24</sup> Տիբեթ այցելությամբ և իր հաշվեմատյանով հայտնի Հովհաննես Ջուլայեցին, 18 հոբ մահուղ արտահանելով Իրանից, Բանդար Աբասի նավահանգստում վնարել է 24 թուման 240 դիան մասատուր, մինչդեռ, ըստ Կոստանդ Ջուլայեցու տվյալների, հարկային պաշտոնյաները պետք է զանձեին 15,22 %-ի չափով, այն է՝ ընդամենը 22 թուման 6017 դիան գումար (Կոստանդ Ջուլայեցու երկում Բանդար Աբասի նավահանգստի տուրքերի

Կոստանդ Ջուղայեցին ինքն էլ բարեխղճորեն զգուշացնում է իր ընթերցողին այդ մասին՝ պարբերաբար կրկնելով «վախտի գօրայ՝ գայ եվել, գայ պակաս» արտահայտությունը<sup>25</sup>: Երկի սկզբում ու միջնամասում էլ վաճառականների զրույցի բովանդակությունը միմյանց հղված խրատական խորհուրդներն են, որոնք չափազանց հետաքրքրական են առևտրական գործունեության բազմազան վտանգներն արձանագրելու, դրանցից զերծ մնալու զգուշացումների ու այդպիսով վաճառականի առօրյա կենցաղն արտացոլելու տեսանկյունից: Ջուղայեցի այս հեղինակի երկրորդ ձեռնարկը, որն ավելի նպատակահարմար է անվանել «Դոներն ուղամին»<sup>26</sup>, վաճառականական խնդիրների ժողովածու է՝ շարադրված առևտրական տարբեր գործարքների օրինակներով թվաբանական հմտություններ փոխանցելու ծրագրով: Շուրջ 150 այս խնդիրներում ար-

մասին տե՛ս Նոր Ջուղայի ձեռ. Հ<sup>մ</sup> 64, 23բ): Գրեթե 1,5 թումանի այս տարբերությունը վկայությունն է ոչ այնքան հայկական առևտրական ձեռնարկի մատուցած տեղեկության անվստահելիության, որքան Սեֆյան Իրանի հարկային պաշտոնյաների կամայականությունների (Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը, աշխատասիրությամբ՝ Լ. Խաչիկյանի ու Հ. Փափազյանի, Երևան, 1984, էջ 38-39):

<sup>25</sup> Կոստանդ Ջուղայեցու այս արտահայտությունը հիշեցնում է նույն հարցի կապակցությամբ Ղուկաս Վանանդեցու համարժեք ձևակերպումը՝ «այիշվերիշի բանն աստուածադիր կանոն չէ, որ անփոփոխ լինի, բայց փոփոխական է, եւ մարդադիր կանոն, եւ ժամանակատուր» (Ղուկաս Վանանդեցի, *Գանձ չափոյ*, էջ 53): Hierapet di Martin կամ Մարտիրոսի որդի Հայրապետ անունով հայտնի հայ վաճառականը, որից մեզ է հասել երբևէ չուսումնասիրված նամակագրական հսկայական ժառանգություն, կարծես արձագանքելով Կոստանդ Ջուղայեցու ու Ղուկաս Վանանդեցու ձևակերպումներին, իր նամակներից մեկում գրում է. «Էսօրէն գնէրն էտ է, որ արգ արարի. Աստուծոյ ձեռն է ելլեաճալն, պակասիլն» (տե՛ս Archivio di Stato di Venezia, Documenti Armeni Mercantili, busta 3):

<sup>26</sup> 1675 թ. Մարսելում տպագրված «Արհեստ համարողութեան» գրքի կապակցությամբ երկու տարբեր առիթով Հակոբ Անասյանն անդրադարձել է Կոստանդ Ջուղայեցու երկերին՝ նշված գիրքը համարելով նրա տեսական աշխատության խմբագրված տարբերակը, իսկ «Աշխարհաժողով»-ը և առևտրական խնդիրների ժողովածուն՝ համապատասխանաբար՝ նրա պատմական ու գործնական աշխատություններ (3. Անասեան, «Հայերէն թուաբանական դասագրքերի պատմութեան համար, Ա. «Արհեստ համարողութեան», Բ. «Արիքմետիկայ», Մանր երկեր, Լոս Անջելես, 1987, էջ 671-674, նույնի, *Հայկական մատենագիտություն*, հ. Բ, Երևան, 1976, էջ 874-877): Խնդիրներն ամփոփող երկի խորագրի տեսանկյունից կարևոր է նշել, որ նշանավոր ուսումնասիրողն այն հիշատակում է «Դոն համարողական արհեստին» վերնագրով՝ ակնհայտորեն հետևելով ՄՄ 5994 ձեռագրին (թ. 48ա): Վերջինս, սակայն, ենթարկվել է ընդօրինակող զրչի միջամտություններին, ինչի արդյունքում ոչ միայն բնագրի հետ առնչություն չունեցող երկու նոր նյութ է հավելվել բուն տեքստին, այլև ընտրվել է կամայական վերնագիր Կոստանդ Ջուղայեցու երկի համար: Մյուս բոլոր ձեռագրերում վաճառականական խնդիրների ներկայացումը սկսվում է «կատարեցավ աշխարհաժողով չափի և գազի, ֆարի և կշեռի և հառաջ աճեմք գդոներն ուղամին» բառերից հետո՝ առանց որևէ վերնագրային ցուցման (տե՛ս, օրինակ, Նոր Ջուղա ձեռ. Հ<sup>մ</sup> 64, 47բ): Ելնելով այս իրողությունից՝ «Դոներն ուղամին» տարբերակը որպես ձեռնարկի վերնագիր առավել հարազատ ենթ համարում բնագրի ոգուն:

ծարծվում են վաճառականի գործունեության տարբեր փուլերում հանդիպող իրավիճակներ՝ զանազան ապրանքների առուվաճառքից մինչև դրամի փոխառվելուց նույն կտակներին առնչվող հարցեր<sup>27</sup>։ Կոստանդ Ջուլայեցին առաջադրված խնդրից անմիջապես հետո մատուցում է դրա լուծման տարբերակը՝ իր ընթերցողներին ապահովելով մաթեմատիկական գործնական հմտությունների անհրաժեշտ պաշարով։ Այսպես՝ վերանշյալն ամփոփելու պարագայում, առանց մեծ դժվարության հնարավոր է ուրվագծել Կոստանդ Ջուլայեցու դասագրքերում գրի առնված առևտրական տեղեկատվության երեք շերտը՝ խրատական խորհուրդներ, առևտրական շուկաների մասին փաստական տեղեկություններ և վաճառականական խնդիրների միջոցով թվաբանական հմտություններ։

#### Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի» առևտրական ձեռնարկը

Վաղ արդի հայկական մշակութային աշխարհի նշանավոր ներկայացուցիչ Ղուկաս Վանանդեցին, որը թողել է մատենագրական պատկառելի ժառանգություն, հայտնի էր տարբեր գիտությունների ասպարեզում իր գիտելիքներով ու լեզվական հմտություններով։ Այս հանգամանքն արձանագրել է Թովմաս Վանանդեցին Մովսես Խորենացու պատմական երկի առաջին հրատարակության՝ «Ազգաբանութիւն տոհմին յաբեթեան» խորագրով գրքի հիշատակարանում՝ իր տոհմակցին գովաբանելով «Ղուկաս Ֆիլիսոֆա, որ է վարժ զանազան լեզուաց» խոսքերով<sup>28</sup>։ Հայ կաթոլիկ հեղինակ Ստեփանոս Ռոշքան նույնպես Ղուկաս Վանանդեցուն հիշատակել է դրվատական բառերով՝ բնութագրելով նրան որպես «գիտուն եւ գովելի ի վարս իւր»<sup>29</sup>։ Հռոմում ստացած բարձրակարգ կրթությունը Ղուկաս Վանանդեցուն հնարավորություն էր տալիս հաղորդակից լինելու եվրոպական գիտության նվաճումներին։ Հայտնի

<sup>27</sup> Կոստանդ Ջուլայեցու երկում բնութագրական մի խնդրի համար տե՛ս Ս. Բալդարյան, «Կրթություն և հաջողություն. Նոր Զուլայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոց», էջ 57։

<sup>28</sup> Ազգաբանութիւն տոհմին յաբեթեան, յօրինեցեալ ի Մովսիսէ Խորենացու, Ամստերդամ, 1695, էջ 487։

<sup>29</sup> Ստեփանոս Ռոշքա, Ժամանակագրութիւն կամ Տարեկանք եկեղեցականք, Վիեննա, 1964, էջ 190։ Ավելորդ չէ նշել Համազասպ Ոսկյանի գնահատականը, ըստ որի՝ Ստեփանոս Ռոշքան «հաւանօրէն յարաբերութեան մէջ գտնուած ըլլայ... Թովմաս Վանանդացի եպիսկոպոսին եւ անոր Գաբրիել (Միխայել) ու Ղուկաս եղբօրորդիներու հետ, որոնք Ուրբանեան վարժարանին մէջ փիլիսոփայութեան դասընթացքը ըրած են» (Ոսկեան Հ., Ա. Ստեփանոս Վ. Ռոշքա, Բ. Մատթէոս Վ. Զուլայեցի, Վիեննա, 1968, էջ 10, ընդգծումն իմն է – Ս. Բ.)։

են նրա առնչությունները ժամանակի առաջագեմ գործիչներից մի քանիսի հետ: Հիշատակելի են, օրինակ, նրա հանդիպումն ու նամակագրական կապը գերմանացի հայտնի մաթեմատիկոս և փիլիսոփա Գոթֆրիդ Լայբնիցի հետ<sup>30</sup>: Հեղինակելով աշխարհագրական ու վաճառականական բնույթի մի շարք խիստ արժեքավոր գրքեր՝ Ղուկաս Վանանդեցին ձեռք էր բերել մեծ հռչակ, ինչի արտահայտություններից էին Հոլանդիայի աշխարհագրական ընկերության հատուկ պատվոգիրն (1699 թ.)<sup>31</sup> ու Արվեստների մագիստրոսի պատվավոր կոչումը (1707 թ.)<sup>32</sup>, որ շնորհիվ Վանանդեցիների տոհմի այս ներկայացուցիչին ծավալած բեղմնավոր գործունեության համար:

Ի թիվս այլ բացառիկ հրատարակությունների՝ Ղուկաս Վանանդեցու գրչի արդյունքն էր 1699 թ. լույս ընծայված «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի» առևտրական ձեռնարկը: Այն աշխարհաբար տպագիր երրորդ գիրքն էր «Արհեստ համարողութեան» (1675 թ.) և «Պարզաբանութիւն հոգեհոսագ» (1687 թ.) գրքերից հետո: Հետաքրքիր է արձանագրել նաև, որ այս երկը տեղ է գտել ուշ միջնադարում ու վաղ արդի շրջանում եվրոպայում հրատարակված առևտրական ձեռնարկների կոթողային մատենագիտության մեջ<sup>33</sup>: Պատահական չէ անվանաթերթում նշված այն տեղեկությունը, ըստ որի՝ գիրքը հրատարակվել է «ծախիւք և ի խնդրոյ հայցման Զուղայեցի Խաչատուրի որդի պարոն Պետրոսին»<sup>34</sup>. առևտրական գրականություն ունենալու անհրաժեշտությունը առանձին վաճառականների մղում էր նմանատիպ ձեռնարկների հրատարակությունը հովանավորելու

<sup>30</sup> Է. Թաշիրյան, «Հոլանդահայ գաղութը և հայ ազատագրական միտքը (XVII դար)», 16-18-րդ դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը (հոգվածների ժողովածու), Երևան, 1988, էջ 121:

<sup>31</sup> Մ. Խաչատրյան, «Հայ և ռուս փառեզագրության կապերը 17-րդ դարում», ՊԲՀ, 1966, ք. 2, էջ 188:

<sup>32</sup> Մ. Գրիգորեան, Նոր նիւթեր և դիտողութիւններ հրատարակիչ Վանանդեցոյ մասին, Վիեննա, 1969, էջ 74: Բողեյան գրադարանի օգնական Թոմաս Հերնի վկայությամբ՝ 1707 թվականի մայիսի 29-ին Օֆֆորդի Շելդոնյան թատրոնում տեղի ունեցած հանդիսավոր արարողության ժամանակ «Գորթնի արքեպիսկոպոսին», այն է՝ Թովմաս Վանանդեցուն շնորհվեց աստվածաբանության դոկտորի, իսկ նրա զարմիկ Ղուկաս Նուրիջանյանին (Luke Nurigian) արվեստների մագիստրոսի կոչումը (տե՛ս նրա օրագիրը William Dunn Macray, *Annals of the Bodleian Library*, Oxford, A.D. 1598- A.D. 1867, Oxford, Rivingtons, 1868, p. 127):

<sup>33</sup> *Ars Mercatoria: Handbücher und Traktate für den Gebrauch des Kaufmanns, Manuels et traités à l'usage des marchands*, 1470-1820, J. Hoock et P. Jeannin (eds.), *Eine Analytische Bibliographie*, Band 2, 1600-1700, Paderborn, 1993, p. 540.

<sup>34</sup> Ղուկաս Վանանդեցի, *Գանձ չափոյ*, անվանաթերթ:

գործին: Գրքի առաջաբան-հիշատակարանում ևս հեղինակը արձանագրել է մեկանասի անունը՝ «ստիպեալ մանաւանդ ի խնդրոյ Զուգայեցի բարեպաշտ պարոն Պետրոսին»<sup>35</sup>: Հատկանշական է, որ Վանանդեցիների տպարանն արդեն իսկ իր ներդրումն ունեցել էր վաղ արդի հայ վաճառականական գրականության հրատարակության գործում՝ 1695 թվականին լույս ընծայելով «Համատարած աշխարհացոյց» առաջին հայատառ քարտեզը, իսկ 1696 թվականին՝ «Բանալի համատարածի աշխարհացոյցին» ուղեցույց-ձեռնարկը: Վերջինս, ըստ գրքի առաջաբանի դիպուկ ձևակերպման, «առաւելապէս պիտանանայ Վաճառականաց՝ մանաւանդ Հայկազարմից, որք... ընդ ամենայն աշխարհ զանքոյթ երթեկուծիւն ունելով՝ զամենայն երկիր առ ոտն հարելով յաճախեն»<sup>36</sup>: Հայ վաճառականության գրահրատարակչական կարիքներն սպասարկելու գործառույթը Ամստերդամի հայկական համայնքը դարձնում է առավել քան յուրահատուկ, չնայած այն հանգամանքին, որ հոլանդական այս քաղաքում բնակություն հաստատած հայերի թվաքանակը չէր գերազանցում 100-ը<sup>37</sup>: Կարևոր է արձանագրել նաև, որ հայ վաճառականները նույն պատրաստակամությունը հանդես չէին բերում Վանանդեցիների տպագրական մյուս նախաձեռնությունները ֆինանսավորելիս. 1695-1705 թթ. Ամստերդամում հրատարակված 13 գրքերի ու մեծադիր քարտեզի նյութական միջոցների մեծ մասը գոյացել էին Թովմաս Վանանդեցու ավելի քան քսանամյա ճամփորդությունների, հանգանակությունների ու եվրոպական մի շարք տիրակալների անմիջականորեն դիմելու շնորհիվ<sup>38</sup>:

Հասցեագրված լինելով հայ վաճառականական միջավայրին՝ Ղուկաս Վանանդեցու այս ձեռնարկը ծառայել է իր նպատակին՝ հայտնվելով համաշխարհային առևտրում ներգրավված հայ վաճառականների ուշադրության կենտրոնում: Բնութագրական է ժե-ժԸ. դդ. սահմանագծին առևտրական գործունեություն ծավալած եղիա Կարնեցու օրինակը, որն իր շուրջ 5 տասնյակ գրքերից կազմված գրադարանի ցուցակներում նշում է հետևյալ

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 3:

<sup>36</sup> Բանալի համատարածի աշխարհացոյցին մերոյ նորածնի, Ամստերդամ, 1696, էջ 2:

<sup>37</sup> S. Van Rooy, "Armenian Merchant Habits as Mirrored in 17-18<sup>th</sup> Century Amsterdam Documents", *REArm (Nouvelle Série)*, no. 3, 1966, p. 347, S. Aslanian, *From the Indian Ocean to the Mediterranean*, p. 80.

<sup>38</sup> Ս. Ասլանեան, «Reverendissimi in Christo Patris. Յանձնարարական նամակներ, ցանցեր եւ շարժումակութիւն Թովմա Վանանդեցիի կեանքին մէջ (1677-1707)», *ՀԱ*, 2018, ք. 1-12, էջ 147-148:

գիրքը՝ «Գիրք արհեստի չափոց և կշռոց բոլոր աշխարհի»<sup>39</sup>: Վանանդեցիների հրատարակությունների հանդեպ հայ վաճառականության ցուցաբերած հետաքրքրության մեկ այլ օրինակ է Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանի այն հատվածը, որը վերաբերում է 1713 թ. «Համատարած աշխարհացոյց»-ի 2 օրինակ գնելուն. «Բ. (2) դանայ խայեվար աշխարհացոց առի, գինն այ՝ ԻԴ. (24) գուլդի»<sup>40</sup>: Վաճառականական գրականության պահանջարկի տեսանկյունից ավելորդ չէ ուշադրություն դարձնել 1 օրինակի բարձր գնի վրա՝ 12 հոլանդական գուլդեն, որը համարժեք էր 2400 իրանական դրանի<sup>41</sup>: Համեմատության համար նշենք, որ գրքերի ձեռքբերումների մասին եղիա Կարնեցու գրառումների համաձայն՝ 1710-1720 թթ. հայ տպագիր գրքի արժեքը տատանվել է 150-200 դրանի սահմաններում<sup>42</sup>:

Վանանդեցիների հրատարակությունների, տվյալ դեպքում՝ Ղուկաս Վանանդեցու ձեռնարկի հանդեպ հայ վաճառականության բուռն հետաքրքրությունը պայմանավորված էր դրանց բացառիկ օգտակարությամբ: Ինչպես գնահատում է Ա. Սարուխանը, «այս գիրքն իսկապէս մի «Գանձ» էր ընդհանրապէս հայ վաճառականների եւ մասնաւորապէս Ամստերդամում հաստատուած ջուդայեցիների համար»<sup>43</sup>: Իսկապէս, հայ վաճառականները եզակի հնարավորություն էին ստանում առևտրական տպագիր ձեռնարկի միջոցով ստանալու բազմաբնույթ այն տեղեկատվությունը, առանց որի առևտրական գործունեությունը նկատելիորեն պակաս արդյունավետ կլիներ:

Թե՛ կառուցվածքային, թե՛ բովանդակային առումով «Գանձ չափոյ»-ն շարադրված է առևտրական տեղեկատվությունն առավել համակարգված մատուցելու ծրագրով: «Առ հայազուն վաճառասէր եղբարս» խորագրով առաջաբանին հաջորդում է 3 գլուխ՝ «Յաղագս հին կշռոց, չափոց եւ դրամից», «Պատմութիւն եւ խօսք վաճառականութեան», «Յաղագս մղոնաչափութեան»: Առա-

<sup>39</sup> Բ. Զուգասյան, «Եղիա Մուշեղյանի (Կարնեցու) գրադարանը», ԼՀԳ, 1983, թ. 1, էջ 70: Այս գիրքը եղիային ուղարկել էր «Մովսէսն քօխաքցի Պէկլէրի որդի Մինասի ձեռովն» (նույն տեղում, էջ 67):

<sup>40</sup> Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանը, աշխատասիրությամբ՝ Շ. Խաչիկյանի, Երևան, 1994, էջ 22, 80:

<sup>41</sup> Ըստ Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանի տվյալների՝ 1 հոլանդական գուլդենը հավասար էր 200 դիանի (Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանը, էջ 169): Զարմանալի է, որ Կոստանդ Ջուդայեցին ու Ղուկաս Վանանդեցին իրենց առևտրական ձեռնարկներում գուլդենի փոխարժեքի մասին ոչինչ չեն գրում՝ այդպիսով Սարհադի հաշվեմատյանի ցուցումը դարձնելով եզակի:

<sup>42</sup> Բ. Զուգասյան, նշվ. աշխ., էջ 68:

<sup>43</sup> Ա. Սարուխան, Հոլանդան եւ հայերը ԺԶ.-ԺԹ. դարերում, Վիեննա, 1926, էջ 115:

ջին գլխում ներկայացված են տարբեր երկրների շափի, կշռի ու դրամական համակարգերը, իսկ երկրորդում շարադրված է վաղ արդի աշխարհի առևտրական շուկաների մասին արժեքավոր տեղեկատվություն: Երրորդ գլուխն ավելի բազմաբովանդակ է՝ բաղկացած լինելով հետևյալ հատվածներից՝ «Չափ մղոնաց կամ մից Եւրօպայու», «Կարճառօտ պատմութիւն ռաղամի դռնէրին», «Յաղագս երեքի կանոնին», «Ֆարդ երեքի կանոնին», «Յաղագս վաճառական ընկերութեան»: Ղուկաս Վանանդեցուն հաջողվել է լուծել վաճառականական ձեռնարկի սահմաններում առևտրական բազմաբնույթ տեղեկություններ ի մի բերելու խնդիրը, որը «գործ իմն ծանր, դժուարին եւ անհնարին» էր համարում հեղինակն ինքը գրքի առաջաբանում<sup>44</sup>:

#### Վաճառականական ձեռնարկները համեմատության մեջ

Ղուկաս Վանանդեցու ու Կոստանդ Զուգայեցու ձեռնարկների առնչակցության մասին հստակ պատկերացում կազմելու համար տեղին է կատարել բովանդակային համեմատություն՝ անհրաժեշտության դեպքում դիմելով նաև բնագրերի զուգադիր քննության: Կառուցվածքային առումով Ղուկաս Վանանդեցու ձեռնարկն առավել մշակված ու համակարգված շարադրանքի տպավորություն է թողնում: Մատուցվող նյութը հեղինակը հետևողականորեն մասնատել է մի շարք հատվածների: Այսպես՝ առաջին գլխում առանձին հատվածների տեսքով են ներկայացված շափի, կշռի ու դրամական միավորները: Երկրորդ գլխում վաճառականական շուկաների ներկայացմանը, որպես առանձին մաս, հաջորդում է նույն այդ վայրերի վերաբերյալ էթնոմշակութային տեղեկատվություն: Երկր երրորդ գլուխն առավել մասնատվածն է՝ ընդգրկելով եվրոպական քաղաքների՝ միմյանցից ունեցած հեռավորությունից մինչև առևտրական թվաբանության հմտությունների ներկայացում: Կոստանդ Զուգայեցու «Աշխարհաժողով»-ը, ընդհակառակը, շարադրված է առևտրական շուկաների ամբողջական ու հաջորդական նկարագրման սկզբունքով: Այսպես օրինակ՝ Զենովայի վերաբերյալ տվյալներին հեղինակն անցնում է միայն Վենետիկի մասին առևտրական ողջ տեղեկատվությունը ներկայացնելուց հետո: Չափի, կշռի միավորների ու դրամական համակարգի մասին բոլոր տվյալներն ուղեկցվում են Վենետիկի՝ որպես առևտրական շուկայի ամբողջ-

<sup>44</sup> Ղուկաս Վանանդեցի, Գանձ շափոյ, էջ 3:

ջական նկարագրությամբ: Նույն սկզբունքի վրա կառուցելով ողջ շարադրանքը՝ Կոստանդ Ջուղայեցին հերթականությամբ ներկայացնում է Հեռավոր Արևելքից մինչև Արևմտյան Եվրոպա ընկած առևտրական կենտրոնները: Այսպիսով՝ Ղուկաս Վանանդեցու ու Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկները կառուցվածքային առումով շարադրված են իրարից զանազանվող ծրագրերով: Այս հանգամանքի վրա թերևս իր ազդեցությունն է թողել երկերի բնույթը. եթե «Աշխարհաժողով»-ը գրված էր որպես դասագիրք առևտրական դասընթացի համար, ապա Ղուկաս Վանանդեցու խնդիրն էր իր գիրքը հասցեագրել առավել լայն շրջանակներին՝ ներկայացվող տվյալները դարձնելով համակարգված ու դյուրընկալելի:

Բովանդակային տեսակետից ևս «Գանձ չափոյ»-ն ու «Աշխարհաժողով»-ը հեռու են համանման պատկեր ներկայացնելուց: Բազմաթիվ են հատվածները, որոնք առկա են կա՛մ մի, կա՛մ մյուս ձեռնարկում: Ընդ որում, անգամ դժվար է հստակ պատասխան տալ այն հարցին, թե երկերից որն է առավել բովանդակալիցն ու հարուստն առևտրական տեղեկատվության տեսանկյունից: Հակառակ այն կարծիքին, թե Ղուկաս Վանանդեցու ձեռնարկը «Աշխարհաժողով»-ի վերախմբագրված տարբերակն է՝ բազմաթիվ են «Գանձ չափոյ»-ում հանդիպող այնպիսի հատվածները, որոնք բացակայում են Ջուղայեցի հեղինակի երկում: Դրանց թվին են պատկանում տարբեր ժողովուրդների վերաբերյալ էթնիկական ուշադրավ տեղեկությունները, ապրանքների գների ու եվրոպական քաղաքների՝ միմյանցից ունեցած հեռավորության մասին տվյալները, թվաբանական գործողություններին ու հարակից հարցերին անդրադարձները և այլն: Ընդ որում, եթե եվրոպական քաղաքների դիրքի մասին տեղեկությունները նա կարող էր վերցրած լինել Եվրոպայում լայն տարածում գտած աշխարհագրական բնույթի գրքերից, ապա թվաբանական գործողություններին հաջորդող «երեքի կանոնի» ու «վաճառականական ընկերության կանոնի» մասին հատվածներն ակնհայտորեն հիշեցնում են հայկական մաթեմատիկական դասագրքի՝ «Արհեստ համարողութեան» գրքի<sup>45</sup> համապատաս-

<sup>45</sup> Հայկական մաթեմատիկական այս դասագիրքը, որը նաև աշխարհաբար առաջին տպագիր գիրքն էր, երկար ժամանակ համարվել է գերմանացի գիտնական Քրիստոֆեր Կլավիուսի (1538-1612 թթ.) աշխատության հայերեն թարգմանություն, մինչդեռ, ինչպես առաջին անգամ մատնանշել է Հակոբ Անասյանը, այս գրքի հեաֆերը տանում են դեպի Նոր Զուղա՝ հեղինակային պատկանելության հարցը լուծելով հոգուտ հենց Կոստանդ Ջուղայեցու (Յ. Անասեան, «Հայերէն թուաբանական դասագրքերի պատմութեան համար», էջ 671-674, նույնի, Հայկական մատենագիտություն, էջ 874-877): Այս մասին տե՛ս նաև Ա. Փաշայան, ««Արհեստ համարողութեան»-ը հայ հնատիպ գրքի պատմութեան հո-

խան մասերը<sup>46</sup>: Ինչ վերաբերում է նրա գրի առած վաճառականական խնդիրներին, ապա դրանք առնչություն չունեն Կոստանդ Ջուղայեցու խնդիրների հետ, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ վերջինիս «Դոներն ռաղամին» երկը չի հայտնվել Դուկաս Վանանդեցու ուշադրության կենտրոնում:

Որոշակի տարբերություններ կարելի է մատնանշել նաև վաճառականական շուկաների՝ երկու երկերի նկարագրություններում: Բերենք մի հատկանշական օրինակ. «Աշխարհաժողով»-ի ձեռագրերում «Եւ Լէ ու Մաջարն քրիստոնեայ են» բառերին հաջորդում է դատարկ տարածություն<sup>47</sup>, որը հավանաբար բաց է թողնվել հետագայում համապատասխան տեղեկություն գտնելու և լրացնելու նպատակով: Եվրոպական շուկաների հարցում հմուտ Դուկաս Վանանդեցին, լրացնելով այս բացը, Մաջարի, այն է՝ Հունգարական թագավորության դրամական միավորների մասին հավելել է հետևյալը. «Ի Մաջառն՝ 1 մարշիլն 7 շէլինգ եւ 7 գրօտ է: 1 դուկատն՝ 10 շէլինգ: 1 շէլինգն՝ 30 գրօտ: 1 ֆլօրինն՝ 20 շէլինգ: 1 շէլինգն՝ 12 հէլր: Կայ այլ միւս ֆլօրին, որ 100 գրօտ է: 1 գրօտն՝ 2 հէլր»<sup>48</sup>: Թեև առևտրական շուկաների նկարագրություններում այլ անհամապատասխանություններ էլ կան, վաճառականական գիտելիքի հենց այս մասը ներկայացնելիս է Դուկաս Վանանդեցին առավելագույն չափով օգտվել «Աշխարհաժողով»-ից<sup>49</sup>: Դրա մասին է խոսում այն հանգամանքը, որ եթե «Գանձ չափոյ»-ի մնացած մասերում հեղինակը շարադրանքը միշտ սկսում է եվրոպական քաղաքներից, ապա առևտրական շուկաները ներկայացնում է Կոստանդ Ջուղայեցու նախընտրած արևելքից արևմուտք հաջորդականությամբ: Գնահատականներն առավել առարկայական դարձնելու և երկու երկերի միջև բնագրային համեմատություն անցկացնելու համար տեղին է դիտարկել Վենետիկի մասին նրանց հաղորդած տեղեկությունները: Ձախ սյունակում ներկայացված հատվածը մեկ ամբողջություն է Կոստանդ Ջուղայեցու երկում, իսկ աջ սյունակում մեջբերվածները վերցվել են Դուկաս Վանանդեցու ձեռնարկի զանազան մասերից և դրվել «Աշխարհաժողով»-ի

լովույթում», ՀԱ, ք. 1-12, 2005, էջ 345-364:

<sup>46</sup> Արհեստ համարողութեան ամբողջ եւ կատարեայ, Մարսել, 1675, էջ 106-121: Հմմտ. **M. Aghassian, K. Kévonian**, "Le commerce arménien dans l'Océan Indien aux 17<sup>e</sup> et 18<sup>e</sup> siècles", p. 172:

<sup>47</sup> Նոր Զուլա ձեռ. Հ<sup>մ</sup> 64, 30ա:

<sup>48</sup> **Դուկաս Վանանդեցի**, Գանձ չափոյ, էջ 23:

<sup>49</sup> Հնդկաստանի առևտրական շուկայի մասին Կոստանդ Ջուղայեցու ու Դուկաս Վանանդեցու հաղորդած գրեթե համամասն տեղեկությունների ֆրանսերեն քաղվածությունը տե՛ս **M. Aghassian, K. Kévonian**, "Le commerce arménien ...", pp. 172-173:

համապատասխան հատվածները դիմաց:

| Կոստանդ Ջուղայեցի,<br>Աշխարհաժողով <sup>50</sup>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 | Ղուկաս Վանանդեցի, Գանձ չափոյ <sup>51</sup>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                          |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <p>Եւ Վանատիկն ամենայն ալիշվէրիշն էլ ողջ Ալիկոնու պէս այ:</p> <p>Խանբարով իքմինն թաղայ-թաղայ կու ծախվի և քաշով դաբայ իքմինն ղանթարով կու ծախվի և ղանթարով կու քաշվի, որ մին ղանթարն ճ (100) լտրայ է, որ մին լտրէն ղզ (96) դրամ է, որ մին ղանթարն իզ (24) յօղայ է, որ մին ղանթարն թոզճ (9600) դրամ է:</p> <p>Ղանթարայհասապ իքմին այսք են՝ բուրթն, բանբակն, բանբակէ մանածն, պալմոմն և այլ նման սոցոնց, և աբրիշմին հաֆայն էս այ, որ ղադիմի բարբաստ կապէլ ան, որ քնար աբրիշումին լտրէն խը (48) դոուշէթ այ, որ է՝ ք (2) տուկատ կորէնթ այ, զրայ իզ</p> | <p>Վէնէտիկու ալիշվէրիշն Լիգօրնու պէս այ:</p> <p>Վէնէտիկցիք մին լիբրէն բաժանեն ի 12 ունցա, 1728 ղիրաթ, 6912 գրան: Մին ղանթարն՝ 100 լիբրայ, մին լիբրէն՝ 96 դրհամ կամ 12 ունցա, մին ունցէն՝ 9 դրհամ, որ է՝ 6 մսխալ: Արդ՝ մին ղանթարն 24 հօղկայ է՝, 9600 դրհամ:</p> <p>Ապրիշումի աշվալն այս է. ղադիմի սովորութիւն է՝ կապած քնար ապրիշումն լիտրէն 48 ղրուշէթ, որ է՝ 2 կօնէնթ դուկատ: Թէ թանկ է քնար ապրիշումն՝ դարէն փոքր այ, թէ աժան է՝ դարէն շատ է: Միւս ապրիշումիցն՝ վախտին գեօրայ՝ գահ աւել, գահ</p> |

<sup>50</sup> Նոր Ջուղա ձեռ. Հ<sup>մ</sup> 64, 41ա-42բ:

<sup>51</sup> **Ղուկաս Վանանդեցի**, *Գանձ չափոյ*, էջ 9-10, 24, 42 ևն: Կարելի է հավելել, որ Վենետիկի մասին առևտրական տեղեկատվությունը, բացի վաճառականական ձեռնարկներից, մեծ ծավալով շրջանառվել է նաև հայ վաճառականների նամակներում: Հայրապետի որդի Մարտիրոսի նամակների սևագիր օրինակների ժողովածուն, որը պահվում է Վենետիկի պետական արխիվի հայերեն փաստաթղթերի ֆոնդում և հասնում է շուրջ 500 էջի, լի է Վենետիկի առևտրական շուկայի մասին բազմաբանակ տեղեկություններով: Այսպես՝ Հայոց 1151 թվականի [1151+551=1702] փետրվարի 7-ին «Պարօն Յօվանիսին» գրած իր նամակի մեծագույն մասը Հայրապետը հատկացրել է Վենետիկի չափի ու կշռի միավորների, դրամական համակարգի, վաճառքի համար եկամտաբեր ապրանքների ու այլ հարցերի լուսաբանմանը. «Դարձեալ բաղօլվաթ բարօլ այս երկիրս գալու համարիք գրել և ապրանաց անֆալն այս է: Նախ ղըռմըզին լտրէն, որ տեղս ծախման է, ղզ [96] դրամ է, լիբրայ սուքիլ կասեն, նե մըտելուն լրին ք [2] դոուշէթ է, որ իզ [24] դոուշէթն մին տուկատ է, մին տուկատըն գ [6] լիբայ, դ [4] սօլտի է, մին սվիլայ մաուշին, որ բազըրկանի միջումն Խօռմաց երկրէն կամպի գոյ, ը [8] լիբայ հասապ կառեն, որ մին մաուշին 31 դոուշէթ գնի...» (տե՛ս Archivio di Stato di Venezia, Documenti Armeni Mercantili, busta 3):

|                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                                                                                                                                                                                                                                                                                                                     |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <p>(24) ղռուշէթն մին տուկատ կորէնթ ալ: Հիմացիր, որ քնար աբրշմին թանկ յեժանութինն դարայ առելէ վերայ կու խօսեն, թէ թանկ ալ՝ դարէ փոքրէ, թէ յեժան ալ՝ դարէն շատէ, և միուս աբրշմինոցն վախտի գօրայ գայ թանկ, գայ յեժան և ալիշվէրիշին շատն ղռուշէթ կու խօսեն և գայի դօպլի և ձքին և ունկոռուզ կու խօսեն, որ էստոնք ոսկի ան, և էլ ըսկուլթ և տուկատուն, մառչիլ և տուկատ էլ կու խօսեն, որ էստոնք արծաթ ան և էլ լիրայ և ղռուշէթ և ղազէթայ և սօլդի էլ կու խօսեն, որ էստոնք պղինձ ան: Հիմացիր, որ Տալիու ա (1) դօպլին իը (28) լիրայ է և Ասպանիու ա (1) դօպլին իթ (29) լիրայ է, գայ եւել գայ պակաս և մին ձքինն ժը (18) լիրայ է և մին ունկոռուզն ժէ (17) լիրայ է և մին ըսկուլթն ժ (10) լիրայ է և մին տուկատուն թ (9) լիրայ զ (6) սօլդի է և մին մառչիլն ը (8) լիրայ է և մին տուկատն զ (6) լիրայ դ (4) սօլդի է, որ մին լիրէն ի (20) սօլդի է, որ ի (20) սօլդին ժ (10) ղազէթ ալ:</p> <p>Եւ Վանատըկին բանքօյին հասապն էս ալ, որ բանքօյի մին լիրէն ծ (50) տուկատ բանքօյի ալ և էլ բանքօյի մին լիրէն ի (20) սօլդի բանքօյի ալ և մին բանքօյի սօլդին կէս տուկատ բանքօյի ալ և մին բանքօյի տուկատն իդ (24) ղռուշէթ բանքօյի ալ և ա (1) բանքօյի ղռուշէթն զ (6) սօլդի կորէնթ ալ և մին բանքօյի լիրէն ժբ (12) տուկատ կորէնթ ալ:</p> | <p>փոքր, թանկ ու աժան: Ալիշվէրիշի փողն շատն կրուշէթ ալ:</p> <p>Վէնէտիկումն 2 սօլդին մին ղազէթ ալ: Քսան սօլդին մին լիրայ է: 24 ղռուշէթն մին դուկատ է: 6 լիրէն եւ 4 սօլդին մին դուկատ է: 8 լիրէն մին մարչիլ է: 9 լիրայ եւ 6 սօլդի մին դուկատուն է: 10 լիրէն մին ըսկուտ է:</p> <p>Վէնէտիկ՝ մէկ մարքն 8 ունց է, մէկ</p> |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|

|                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <p>եւ այլ միւս լտրով քաշով իքմինն այսք են՝ ղոմզն, մոշամն, քարբարն, քարաստալն, առճըճով ուլունքն, և այլ ինչ որ քաշ կու մտի՝ լտրով, որ մին լտրէն ղզ (96) դրամ է, և մուշկն էլ օնցով կու ծախվի, որ մին օնցէն թ (9) դրամ է և այլ ինչ որ մացով կու ծախվի, որ է՝ գողվիւն, մացէն խ (40) պատ այ և նազլուդարին մացէն եճ (500) պատ է և այլ խալըլին և ջամն դանայ շմարէլ սանդղով էլ կու ծախվի: Եւ մագաղի խուր դավաթն, որն կու քաշեն, որն կու համպարեն, որն դուզինով այ, որ մին դուզինն ժբ (12) այ և քաղաթն ըռըզմով այ, կայ ըռըզմ՝ լ (30) դաստայ այ, կայ, որ ըռըզմ՝ ի (20) դաստայ այ, որ մին դաստէն իդ (24) դաբաղայ այ և ամենայն ապրանքին գնէրն փոխական ան՝ գայ եվել գայ պակաս, և ինչ ապրանք, որ Վանատիկն կու մտի, գմբրուկ չունի, դէրազ, որ նագարաթին խալչն կտան և ինչ ապրանք, որ Վանատըկէն դուս կելնի, ճ-ին (100) ժ (10) գումբրուկ կտան ամենայն խալջով:</p> | <p>ունցէն՝ 4 քուարտ, մէկ քուարտն՝ 36 ղիրէթ, մէկ ղիրաթն 4 գրան է: Կինի մէկ մարքն Վէնէտիկու 4608 գրան կամ 1152 ղիրաթ:</p> <p>Սիգուրաթն այսպէս էր:<br/>Իզմիր, Ըստամպօլ, Զանթայ և Վէնէտիկ գնալն և գալն 7 և 8 էր:</p> <p>Կամբին այսպէս էր:<br/>Վէնէտիկ ալ ուզօ 2 ամիս, 93 գրօտ:</p> <p>Հօլլանդու և Ֆիանդրու երկրի հարիւր մարքն ոսկւոյ կամ արծաթի հարիւր քաշն... Վէնէտիկ քաշն՝ 103 մարք, 1 կարտ աւել:</p> <p>Հարիւր Անվէրսու փունթն Վէնէտիկ մեծ կշիռ՝ 98 և պզտիկ քաշն՝ 56:</p> <p>Համբօրգու չուրի Վէնէտիկն՝ 65 միլ կէս:</p> <p>Ջէնվու ի Վէնէտիկ՝ 198 (միլ):<br/>Վէնէտիկու ի Տրէնտ՝ 94 (միլ):</p> <p>Հոռմու մինչեւ Քիօցա՝ 25 (միլ), Քիոցու բարքայով կու մտնուս յամենավայելուչ քաղաքն Վէնէտիկ:</p> |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|

Երկու ձեռնարկների համապատասխան հատվածների համեմատու-  
թյունից կարելի է կատարել որոշ դիտարկումներ.

ա. Քաշի միավորները երկու ձեռնարկներում գրեթե համանման են շարադրված, սակայն Կոստանդ Ջուղայեցին հարկ է համարում հավելել նաև ապրանքների մասին տվյալներ՝

ղանթարով կշռվող ապրանքներին մասին՝ «ղանթարայհասապ»<sup>52</sup> իքմին այսք են՝ բուրթն, բանբակն, բանբակէ մանածն, պալմոմն և այլ նման սոցոնց»,

լիտրով կշռվող ապրանքների մասին՝ «եւ այլ միւս լտրով քաշով իքմինն այսք են՝ ղոմզն, մոջամն, քարբարն, քարաստալն, առճըճով ուլունքն»,

թղթի վաճառքի մասին՝ «քաղաթն»<sup>53</sup> ըռըզմով<sup>54</sup> ալ, կալ ըռըզմ՝ և (30) դաստայ<sup>55</sup> ալ, կալ, որ ըռըզմ՝ ի (20) դաստայ ալ, որ մին դաստէն իդ (24) դաբաղայ<sup>56</sup> ալ», և այլն:

Բ. Զանազան շուկաներում վարվող հարկային քաղաքականությանն անդրադառնալու Կոստանդ Ջուղայեցու ցանկությունն արտահայտվել է նաև Վենետիկի մասին հիշյալ հատվածում. «Ինչ ապրանք, որ Վանատիկն կու մտի, գմբրուկ չունի, ղէրագ, որ նազարաթին խալջն կտան, և ինչ ապրանք, որ Վանատրեկէն դուս կելնի, ճ-ին (100) ժ (10) գումբրուկ կտան ամենայն խալջով»: «Գանձ չափոյ»-ում բացակայող այս տեղեկությունն արտացոլում է դեռևս 1615 թ. Վենետիկի հանրապետություն ներկրվող ապրանքների զանազան մաքսերի վերացումը<sup>57</sup>: Հետաքրքիր է, որ առևտրական այս արտոնությունն արձանագրել է նաև իտալացի թուրքագետ Պաոլո Վենետիկոյ քաղաքին» չափածո ուղեգրության մեջ<sup>58</sup>:

գ. Ղուկաս Վանանդեցուն՝ Վենետիկ տանող առևտրական ուղիների մասին մղոնաչափական տվյալները առհասարակ բացակայում են «Աշխարհաժողով»-ում.

<sup>52</sup> Դանթաբ բառի «մեծ կշեռ» բացատրությունը հուշում է, որ «ղանթարայհասապ», այն է՝ ղանթարով կշռվող ապրանքները ենթակա են եղել մեծածախ վաճառքի: Բավական է ասել, որ եվրոպական առևտրական կենտրոններում 1 ղանթարը հավասար էր 100 լիտրի, իսկ 1 լիտրը Սեֆյան Իրանում մի դեպքում համարժեք էր 3 կիլոգրամի («Թավրիզի դիտր»), մյուս դեպքում՝ շուրջ 6 կիլոգրամի («Աջամստանայ դիտր»):

<sup>53</sup> Պրսկ. گداز (kādāz) – թուրք:

<sup>54</sup> Արաբ. رسم (rasm) – կարգ, սովորույթ:

<sup>55</sup> Պրսկ. داسته (daste) – կապ, փունջ:

<sup>56</sup> Պրսկ. طباغه (tabāḡe) – այստեղ՝ շերտ:

<sup>57</sup> Հմմտ. Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Բ, Երևան, 1959, էջ 121:

<sup>58</sup> Սահակյան Հ., Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, Երևան, 1975, էջ 281: Երկի հրատարակությունը տե՛ս Պատմության Փարէզի եւ Վեննայի, Պատմության Վենետիկ քաղաքին, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1966: Տե՛ս նաև Խաչատուր Թոխաթցու այս չափածո երկի՝ Պավել Չոբանյանի հետաբերի վերլուծությունը՝ «Հայ ուղեգիրները Հռոմի եւ Իտալիայի մասին», Հայաստանի պատմության նիւթեր կենտրոնական Եւրոպայի դիւաններում, Երևան, 2001, էջ 24-27:

«Համբօրգու շուրի Վենետիկն՝ 65 միլ կէս, Ջենովու ի Վենետիկ՝ 198 (միլ), Վենետիկու ի Տրէնտ՝ 94 (միլ), Հոռմու մինչեւ Քիօցա<sup>59</sup> 25 (միլ), Քիօցու բարքայով<sup>60</sup> կու մտնուս յամենավայելուչ քաղաքն Վենետիկ»:

դ. Ղուկաս Վանանդեցու հավելյալ տեղեկատվության մեջ հատկանշական է «կամբի»-ի *cambio* փոխանցային մուրհակի մասին գրանցումը. «Կամբին այսպէս էր: Վենետիկ ալ ուզօ 2 ամիս, 93 գրօտ»: Հայկական աղբյուրներում, ինչպես հայտնի է, փոխանցագիրը հանդես է գալիս «ավաք», «զմեի ավաք», «բաբաթ» կամ «հընդվի» անուններով<sup>61</sup>, մինչդեռ դրա եվրոպական տարատեսակը սկսած ԺԴ. դ. ստացել էր «կամբիո» իտալերեն անվանումը<sup>62</sup>:

ե. Ուշադրության արժանի է նաև թվերի գրանցման համակարգը երկու ձեռնարկներում: Կոստանդ Ջուղայեցին նախընտրում է գործածել այն մոդելը, որը հիմնված էր հայկական տառաթվային համակարգի վրա և լայն տարածում ուներ ջուղայեցի վաճառականների շրջանում<sup>63</sup>: Դրա համաձայն՝ միավորներն ու տասնավորները գրվում էին անփոփոխ, մինչդեռ հարյուրավորներն ու հազարավորները կազմվում էին միավորների շարքի և «ճ» ու «ռ» տառերի համակցումով (օրինակ՝ եճ՝ 500, զոգճիբ՝ 6322): Դրան հակառակ՝ Ղուկաս Վանանդեցին, ինչպես հիշյալ հատվածում, այնպես էլ ողջ երկում օգտագործում է արաբական թվանշանները: Միակ բացառությունը «1» թիվն է, որի փոխարեն հեղինակը հետևողականորեն գործածում է «մին» կամ «մէկ» բառերը: Այս հանգամանքը կարելի է բացատրել Ղուկաս Վանանդեցու վրա եվրոպական միջավայրի թողած ազդեցությամբ. ԺԶ. դարի կեսերից արաբական թվանշաններն արդեն իսկ լայն գործածություն էին ստացել եվրոպայի մեծ մասում՝ հռոմեական թվանշաններն ամբողջովին թողնելով մրցակցու-

<sup>59</sup> Կիոջա – Վենետիկից 25 կմ հարավ, հայտնի էր «Փոբրիկ Վենետիկ» անունով:

<sup>60</sup> Լատին. *barca* – մակույկ: Անցել է եվրոպական մի շարք լեզուների (օր.՝ ֆրանս. *barque*):

<sup>61</sup> Խաչիկյան Շ., «Փոխանցային մուրհակը հայ խոջայական միջավայրում», ՊԲՀ, 1981, թ. 1, էջ 91, Khachikian Sh., “The Bill of Exchange in the Milieu of New Julfan Armenian Merchants”, *Les arméniens dans le commerce asiatique au début de l'ère moderne*, Sushil Chaudhury et Kéram Kévonian (éds.), Paris, 2007, pp. 277-278.

<sup>62</sup> Denzel M., “The European Bill of Exchange: Its Development from the Middle Ages to 1914”, S. Chaudhuri and M. Denzel (eds.), *Cashless Payments and Transactions from the Antiquity to 1914*, Stuttgart, 2008, p. 157.

<sup>63</sup> Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը, էջ 61-62: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Kévonian K., “Numération, calcul, comptabilité et commerce”, *Les arméniens dans le commerce asiatique au début de l'ère moderne*, pp. 283-370:

թյունից դուրս:

զ. Ընդհանուր առմամբ, Ղուկաս Վանանդեցին զգալի ինքնուրույնություն է հանդես բերում: Այն, որ Վենետիկի մասին իր տեղեկությունների աղբյուրներից մեկը «Աշխարհաժողով»-ն է, ակնհայտ է առանձին դեպքերում շարադրանքի համանմանությունից: Այդ հանգամանքը, սակայն, ամենևին չի կաշկանդում «Գանձ չափոյ»-ի հեղինակին. նա ոչ միայն ընտրողաբար է ներկայացնում Կոստանդ Ջուղայեցու տվյալները, այլև դրանց հավելում է բազմաթիվ այլ ուշագրավ տեղեկություններ՝ իր ձեռնարկը զգալիորեն ինքնուրույն դարձնելով «Աշխարհաժողով»-ից: Ընդ որում, այս գնահատականը պետք է տարածել ոչ միայն Վենետիկի առևտրական շուկայի վերաբերյալ հիշյալ հատվածի, այլև ողջ շարադրանքի վրա<sup>64</sup>:

Եվ վերջում, մեկ կարևոր արձանագրում ևս: Վաճառականական դասագրքերի հարուստ պատմության մեջ դրանց հեղինակների ստեղծագործական շփումների տեսանկյունից հայկական այս օրինակը եզակի չէ: Ընդհակառակը, Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկից Ղուկաս Վանանդեցու ունեցած որոշակի կախվածությունը պետք է դիտարկել վաղ արդի Եվրոպայում դիտված այն երևույթի համատեքստում, երբ վաճառականական լայն շրջանակների համակրանքին արժանացած դասագրքերը չափանիշ էին դառնում համանման ձեռնարկների ապագա հեղինակների համար: Այս առումով լավագույն օրինակն, անկասկած, ֆրանսիացի վաճառական ու հեղինակ Ժակ Սավարիի (1622-

<sup>64</sup> Ամստերդամում «Աշխարհաժողով»-ի լայն գործածությունը համադրելի է մի շարք այլ բնակավայրերում ևս այս երկի շրջանառության դրվագների հետ: Այդ փաստը պետք է դիտարկել «մարդկանց ու առակաների» շրջանառության այն տեսության շրջանակում, որ առաջարկել է Կլոդ Մարկովիցը 2000 թվականին (Markovits C., *The Global World of Indian Merchants, 1750–1947: Traders of Sind from Bukhara to Panama*, New York: Cambridge University Press, 2000): Համաձայն դրա՝ վաղ արդի առևտրական ցանցերում պետք է տեղի ունեցած լինե՞ր 5 երևույթի կայուն շրջանառություն՝ վաճառականներ, ապրանքներ, կապիտալ, տեղեկատվություն ու կանայք: «Աշխարհաժողով»-ի ուսումնասիրությունը թույլ է տալիս հետուն գնացող եզրահանգումներ անել Նոր Զուղայի ցանցում վաճառականական այս դասագրքի շրջանառության մասին՝ այն դիտարկելով որպես առևտրական տեղեկատվության փոխանցման յուրահատուկ տեսակ, որը, բնորոշ չլինելով վաղ արդի շրջանի ասիական առևտրական մյուս համայնքներին, Նոր Զուղայի առևտրական ցանցն այս առումով դարձնում է յուրահատուկ: Այս մասին տե՛ս Baldaryan S., “An Armenian Trade Manual in Circulation: Constant of Julfa, His *Compendium* and the Dissemination of Information in the Julfan Trade Network”, Paper Presented at the 17th Graduate Student Colloquium in Armenian Studies, UCLA, February 15, 2019:

1690) «Կատարյալ վաճառականը» դասագիրքն է, որն առաջին հրատարակությունից<sup>65</sup> մինչև 1800 թվականն ընկած ժամանակահատվածում ունեցել է ավելի քանի 30 հրատարակություն, ներառյալ՝ անգլերեն, հոլանդերեն ու իտալերեն թարգմանությունները<sup>66</sup>։ Ինչպես ցույց է տալիս Ֆրանսիացի մի հետազոտողի ուսումնասիրությունը, ԺԸ. դարում մարսելցի վաճառականներից յուրաքանչյուրն ուներ այս ձեռնարկի իր օրինակը<sup>67</sup>։ Ֆրանչեսկա Տրիվելլատոյի նորերս արված դիպուկ գնահատականում ակնհայտորեն արտացոլված է Սավարիի ձեռնարկի ունեցած համբավը ողջ եվրոպայում. «Ժակ Սավարիի «Կատարյալ վաճառականը», որն առաջին անգամ հրատարակվել է 1675 թվականին, ԺԷ. դարի ֆրանսիական առևտրական հասարակության մանիֆեստն էր։ Այն նաև վաղ արդի եվրոպայի ամենից շատ վերահրատարակված, թարգմանված ու ընդօրինակված առևտրական դասագիրքն էր»<sup>68</sup>։ Հասկանալի է, որ վաճառականական այս ձեռնարկի համաեվրոպական համբավը պայմանավորում էր այն հնարավորինս ընդօրինակելու եվրոպացի հեղինակներից շատերի ձգտումը։ Համանման նշանակություն կարելի է վերագրել նաև Կոստանդ Զուդայեցու առևտրական ձեռնարկներին, որոնք,

<sup>65</sup> Jacques Savary, *Le parfait négociant ou Instruction générale pour ce qui regarde le commerce des marchandises de France et des pays étrangers*, Paris: Chez Louis Billaine, 1675. Ժակ Սավարիի առևտրական այս ձեռնարկի մասին մանրամասն տե՛ս Hauser H., “Le ‘parfait négociant’ de Jacques Savary,” *Revue d’histoire économique et sociale*, 1925, no. 13, pp. 1–28; Hook J., “Le phénomène Savary et l’innovation en matière commerciale en France aux XVIIe et XVIIIe siècles”, *Jean-Pierre Kintz (ed.), Innovations et nouveaux techniques de l’Antiquité à nos jours: Actes du colloque international de Mulhouse (septembre 1987)*, Strasbourg: Oberlin, 1989, pp. 113–123; Coffman D’Maris, “Economic Thought and State Practice in the Atlantic World: The ‘Phénomène Savary’ in Context”, *D’Maris Coffman, Adrian Leonard and William O’Reilly (eds.), The Atlantic World*, Routledge: London and New York, 2015, pp. 618–632. Վերջին հոդվածի կապակցությամբ շնորհակալություն եմ հայտնում հեղինակին իր աշխատանքի էլեկտրոնային տարբերակը սիրալի կերպով իմ տրամադրության տակ դնելու համար։

<sup>66</sup> Ժակ Սավարիի դասագրքի՝ 1675–1800 թթ. վերաբերող բոլոր հրատարակությունների մատենագիտական ցանկը տե՛ս *Ars Mercatoria: Handbücher und Traktate für den Gebrauch des Kaufmanns, Manuels et traités à l’usage des marchands*, pp. 488–497.

<sup>67</sup> Carrière C., *Négociants marseillais au XVIIIe siècle: Contribution à l’étude des économies maritimes*, Marseilles: Institut Historique de Provence, 1973, pp. 765–770.

<sup>68</sup> Trivellato F., *The Promise and Perils of Credit: What a Forgotten Legend about Jews and Finance Tells us about the Making of European Commercial Society*, Princeton: Princeton University Press, 2019, p. 99.

գրական այդ ժանրում առաջին ամբողջական օրինակները լինելով հայ իրականության մեջ, ուղենշային դերակատարություն պետք է ստանային հետագա հայ հեղինակների համար: Այս իմաստով Ղուկաս Վանանդեցու օրինակը միակը չէ: 1753 թվականին, երբ Նոր Զուղայի համաշխարհային առևտրական ցանցն արդեն անկում էր ապրել, Հակոբջանի որդի Ծատուրն առևտրական իր ձեռնարկի ներածական մասը շարադրում էր՝ հետևելով «Աշխարհաժողով»-ի համապատասխան հատվածներին<sup>69</sup>: Այս և վաղ արդի հայ առևտրական գրականության վրա Կոստանդ Ջուղայեցու երկերի ազդեցության այլ դրվագները դրանց համար ապահովում են մոտավորապես այն դերակատարությունը, ինչ ժակ Սավարիի «Կատարյալ վաճառականն» է ունեցել վաղ արդի եվրոպայում<sup>70</sup>:

### Եզրակացություններ

Ուշ միջնադարում ու վաղ արդի ժամանակահատվածում եվրոպայում հսկայական տարածում ստացած վաճառականական ձեռնարկների շա-

<sup>69</sup> ՄՄ 9284, 5բ-6ա: Հարկ է նշել նաև, որ Աստրախանում շարադրված այս առևտրական ձեռնարկի վրա իր ազդեցությունն է թողել նաև Ղուկաս Վանանդեցու երկը: Բավական է ասել, որ հեղինակն իր ձեռնարկի տիտղոսաթերթը ձևավորել է «Գանձ չափոյ»-ի ակնհայտ նմանությունը՝ չվարանելով կատարել մի քանի անհրաժեշտ փոփոխություններ: Մասնավորապես, Ամստերդամը փոխարինվել է Աստրախանով, 1699 թվականը՝ 1753-ով, իսկ երկի հովանավոր Պետրոս Ջուղայեցու անունը՝ հենց հեղինակի անվամբ (նույն տեղում, 4ա):

<sup>70</sup> Ամստերդամում ու Աստրախանում «Աշխարհաժողով»-ի լայն գործածությունը համադրելի է մի շարք այլ բնակավայրերում ևս այս երկի շրջանառության դրվագների հետ: Այդ փաստը պետք է դիտարկել «մարդկանց ու առարկաների» շրջանառության այն տեսության շրջանակում, որ առաջարկել է Կլոդ Մարկովիցը 2000 թվականին (Markovits C., *The Global World of Indian Merchants, 1750–1947: Traders of Sind from Bukhara to Panama*, New York: Cambridge University Press, 2000): Համաձայն դրա՝ վաղ արդի առևտրական ցանցերում պետք է տեղի ունեցած լինե՞ր 5 երևույթի կայուն շրջանառություն՝ վաճառականներ, ապրանքներ, կապիտալ, տեղեկատվություն ու կանախ: «Աշխարհաժողով»-ի ուսումնասիրությունը թույլ է տալիս հետոն գնացող եզրահանգումներ անել Նոր Զուղայի ցանցում վաճառականական այս դասագրքի շրջանառության մասին՝ այն դիտարկելով որպես առևտրական տեղեկատվության փոխանցման յուրահատուկ տեսակ, որը, բնորոշ շլինելով վաղ արդի շրջանի ասիական առևտրական մյուս համայնքներին, Նոր Զուղայի առևտրական ցանցն այս առումով դարձնում է յուրահատուկ: Այս մասին տե՛ս Baldaryan S., “An Armenian Trade Manual in Circulation: Constant of Julfa, His Compendium and the Dissemination of Information in the Julfan Trade Network”, Paper Presented at the 17th Graduate Student Colloquium in Armenian Studies, UCLA, February 15, 2019:

րադրման ու հրատարակման գործը Ժէ.-ԺԸ. դդ. իր զուգահեռն է ունեցել նաև հայ իրականության մեջ: Սակայն «առևտրի գաղտնիքների»<sup>71</sup> մասին պատմող հայկական վաճառականական ձեռնարկների ուսումնասիրությունը դեռևս միայն նախնական փուլում է գտնվում՝ լիակատար իրավունք ունենալով բնորոշվելու որպես վաղ արդի հայոց պատմության, առաջին հերթին՝ հայ վաճառականության պատմության բաց ոլորտ: Այս ուղղությամբ կատարվելիք աշխատանքները պետք է միտված լինեն այդ առևտրական ձեռնարկներից առավել կարևորների գիտական բնագրերի հրատարակությանը, ինչպես նաև՝ դրանց հետազոտությունը շատ ավելի լայն՝ եվրոպական համապատասխան աշխատությունների համապատկերում:

1699 թվականին Ամստերդամում լույս տեսած «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի» ձեռնարկը Ղուկաս Վանանդեցին շարադրել է՝ ուշադրության կենտրոնում պահելով նախօրինակների՝ Կոստանդ Ջուղայեցու առևտրական դասագրքերը: Վանանդեցի հեղինակն իր երկի առանձին հատվածներում ակնհայտորեն օգտվել է Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով»-ից, ինչպես նաև՝ 1675 թվականին Մարսելում հրատարակված «Արհեստ համարողութեան» գրքից, որի հեղինակի հարցը, ըստ Հակոբ Անասյանի համոզիչ եզրակացության, պետք է լուծվի նույն այս ջուղայեցի դպրապետի օգտին: Հայկական առևտրական ձեռնարկների առնչակցության այս դրվագը հիշեցնում է վաղ արդի եվրոպայում արձանագրված այն երևույթը, երբ վաճառականների շրջանում լայն ընդունելություն գտած ձեռնարկները դառնում էին ընդօրինակման առարկա նմանօրինակ գրքերի հետագա հեղինակների համար: Այս ամենով հանդերձ, Ղուկաս Վանանդեցին հանդես է բերում ստեղծագործական ինքնուրույնություն՝ փոխառված հատվածների նկատմամբ ցուցաբերելով ընտրողական մոտեցում և իր երկում ներառելով առևտրական մեծաքանակ տեղեկատվություն, որը բացակայում է Կոստանդ Ջուղայեցու դասագրքերում: Բազմաթիվ առումներով «Գանձ չափոյ»-ի յուրահատկությունն ու ինքնատիպությունը մղում են առավել քան խնդրահարույց համարելու վերջինս «Աշխարհաժողով»-ի խմբագրված տարբերակի սահմաններում դիտարկելու լայն տարածում ունեցող մոտեցումը:

<sup>71</sup> Markovits C., The Global World of Indian Merchants, p. 25.

SARGIS BALDARYAN

**BETWEEN NEW JULFA AND AMSTERDAM:  
EARLY MODERN ARMENIAN TRADE MANUALS  
IN COMPARISON**

**Key words:** merchant, Konstant of Julfa, Compendium, Ghukas of Vanand, circulation theory.

The paper explores three early modern Armenian trade manuals written in New Julfa and Amsterdam at the end of the seventeenth century. The author has carried out a comparative analysis: A Treasury of Measures, Numbers and Moneys of the Entire World by Ghukas of Vanand versus Compendium and Introduction to Arithmetic by Konstant of Julfa. The study is based on a detailed examination of the manuscripts of Konstant's manuals kept in Yerevan, Oxford, and New Julfa.

It begins with an overview of the contents of the three commercial manuals. The second part of the article argues that, contrary to the current opinion, Ghukas of Vanand did not simply copy his source. Ghukas' manual contains abundant commercial information significantly different from what Konstant of Julfa included in his handbooks.

САРКИС БАЛДАРЯН

**МЕЖДУ НОВОЙ ДЖУЛЬFOЙ И АМСТЕРДАМОМ:  
АРМЯНСКИЕ УЧЕБНИКИ ТОРГОВОГО ДЕЛА  
РАННЕГО НОВОГО ВРЕМЕНИ**

**Ключевые слова:** купец, Константин Джугаеци, Компендиум, Гукас Ванандеци, теория циркуляции.

В статье рассматриваются три армянских учебника торгового дела, написанных в Новой Джульфе и Амстердаме в конце 17-го века (“Компендиум” и “Введение в Арифметику” Константа Джугаеци и “Сокровищница мер, числа и денег всего мира” Гукаса Ванандеци), дается их сравнительный анализ. Исследование основано на детальном изучении рукописных пособий Константа, хранящихся в Ереване, Оксфорде и Новой Джульфе.

Оно содержит обзор содержания этих коммерческих учебников. Во второй части статьи показывается, что, вопреки распространенному мнению, учебник Гукаса Ванандеци не просто дублирует свой источник, но изобилует большим количеством коммерческой информации, которая значительно отличается от того, что включил в свои учебники Константин Джугаеци.